«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝Խ. Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն---------- 2
- Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում--------- ------ 3
- Եզրակացություն---------- --------- 20
- Օգտագործված գրականության ցանկ----------21

Ներածություն

Կրտսեր դպրոցականի համար ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն սովորողին մղելու է ինքնուրույն հետազոտական գործունեության և անհատական ստեղծագործական բնույթի որոնումների: Այդ դեպքում կրթությունը կվերածվի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեության, ինչը կարող է նպատակաուղղվել երեխաների հետաքրքրությունները, և նրանց մեջ արթնացնել գիտելիքների իմացության ծարավ:

Մանկավարժությունն առաջարկում է կրթական գործընթացում դպրոցականների ինքնակառավարման (ինքնավարության) զարգացման տարբեր ուղիներ: Մի ուղղությունը (Վ. Ն. Ռասշչուպկին, Ս. Դ. Շնչենկո, Լ. Մ. Ֆրիդման) կրթական գործընթացում դպրոցականների ինքնավարությունը դիտում է որպես դասարանում խմբային աշխատանքի կազմակերպման եղանակ, որտեղ կառավարման սյուբեկտը սովորողների խումբը կամ կոլեկտիվն է: Մյուս ուղղությունը (Տ. Ի. Շամովս, Պ. Ի. Տրետյակով) կրթական գործընթացում աշակերտների ինքնավարությունը և ինքնակառավարումը կապում է դպրոցականների անհատական ուսումնական գործունեության ձևավորման և աշակերտի անձի զարգացման հետ:

Ժամանակակից կրթական համակարգի հիմնարար խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը: Հենց այս որակներն են, որ օգնում եմ անձին հետագայում ինքնադրսևորվել կենսագործունեության ցանկացած ոլորտում:

Ինքնուրույնությունը ներկայանում է, որպես անձի առանցքային որակներից մեկը, որը դրսևորվում է նրա կարողության մեջ խնդիրներ դնել իր առջև և փնտրել համապատասխան ուղիներ այդ խնդիրների լուծման համար: Աշակերտների մոտ ինքնուրույնության և ստեղծագործականության ձևավորումը կարող է ընթանալ բարձր մակարդակով միայն այն դեպքում, երբ երեխան կարողանում է նպատակ սահմանել, գտնել դրան հասնելու ուղիները, իրագործել այդ ուղիներն առանց կողմնակի օգնության և հարաբերակցել առաջադրված խնդիրը և ստացված արդյունքները:

Թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր տեխնիկայի զարգացման շնորհիվ շատ մեծ է կրտսեր դպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջը, ինչպես նաև անհրաժեշտություն՝ օգտվելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներից, որոնք կօժանդակեն կրտսեր դպրոցականների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն կրտսեր դպրոցում ինքնուրույն գործունեության փորձը : Այս պայմաններում մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը: Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ: Որպեսզի աշակերտների մեջ ձևավորվեն այս բոլոր հատկանիշները, կարևոր է ուսուցչի դերը: Մանկավարժը պետք է կարողանա գտնել ուսուցման այնպիսի եղանակներ և կիրառի այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան զարգացնել երեխաների մտածողությունը, ստեղծագործական միտքը, մտքի ճկունությունը և արագությունը, նոր լուծումներ փնտրելու և գտնելու կարողությունը:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում՝ աշակերտների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է աշակերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն՝ հետազոտական հմտությունների ձևավորման միջոցով:

3

Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորվում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Կարևորելով ինքնուրույն հետազոտական աշխատանքների դերը կրտսեր դպրոցականի կարողունակությունների ձևավորման հարցում, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների՝ մեթոդապես ճիշտ կազմակերպմանը:

Կրտսեր դպրոցական տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորվել հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղծագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես

որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Կրտսեր դպրոցական տարիքում աշակերտը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքը ունենալու, սակայն մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականության միջև փոխազդեցությունների վրա:

Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրություն են կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

«Ինքնուրույն» հասկացությունն ունի մի քանի սահմանումներ.

- անկախ, ազատ;
- անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն;
- մյուսներից առանձնացված;
- ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման;
- կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է, որպես «անկախություն, անձի ձգտում և ունակություն գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության» :

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող – օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը:

5

Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպես «ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ» :

Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է, որպես «անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը» :

Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրավիճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ:

Դ. Բ. Էլկոնինը դիտարկում է ինքնուրույնությունը, որպես անձի ինտեգրալային հատկություն, որն արտացոլում է անձի կոգնիտիվ և կամային հատկանիշների միասնություն, ստեղծագործական և ակտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ:

Առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի և այլոց կարծիքով կրտսեր դպրոցականների *ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը* դասապրոցեսում առաջին հերթին արտահայտում է կարողության և ընդունակության մեջ ինքնուրույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղղիները:

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ՝ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ *ստեղծագործականությունը* անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց տվել, որ

ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է.Պ.Տորրենսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից:

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

- Մտքի սահունություն;
- Մտքի ճկունություն;
- Մտքի օրիգինալություն / յուրօրինակություն;
- Մտքի մշակվածություն:

Ն.Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել անձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Սակայն, ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

Դպրոցում աշակերտների ստեղծագործականության խթանման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:

Ստեղծագործականությունը աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ: մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է.Պ.Տորրենսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից :

Ուսուցչի կողմից սովորողներին հանձարարվող ինքնուրույն աշխատանքները նպաստում են սովորողի հետազոտական, ստեղծագործական, նախաձեռնողական, ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը և հնարավորություն են տալիս նրան ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել դասի ընթացում ձեռք բերած տեսական գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպումը կրտսեր դպրոցում

Ինքնուրույն են կոչվում այն աշխատանքները, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի նախաձեռությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Որպեսզի սովորողները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի նախաձեռնությամբ: Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը, օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն:

8

Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները , գործելակերպը հստակ իրագործելու պատկերացում:

Նրանք պետք է որոշակիորեն իմանան թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն , ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու, ինչ մեթոդներ, հնարներ են կիրառելու , ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները և այլն:
Այդ ամենն իրականացնելու համար ցանկացած ինքնուրույն աշխատանք կատարելուց առաջ սովորողները պետք է ունենան օպերատիվ պլաններ , որտեղ արտացոլված լինեն, թե ինչը երբ կատարել, երբ ավարտել ու ամփոփել, արդյունքները ներկայացնել քննարկման:

Կան ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ: Օրինակ

1. Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք.
2. Նոր կարողություններ և հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. նման աշխատանքերը իրականացնում են ուսումնական կաբինետներում, մարզադահլիճում, արհեստանոցներում:
3. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները կատարվում են տարբեր ձևով.
4. Աշխատանք դասագրքի վրա.

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

9

- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը,

իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

• Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս շատ կարևոր է առանձին սովորողների գիտելիքների խորացումը, գործնականում գիտելիքներդ կիրառելու կարողության, ինքնուրույն մտածելու ունակության, լարված աշխատելու սովորույթի, խոչդնդոտներն ու դժվարությունները հաղթահարելու ընդունակությունների ձևավորումը:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում:

Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք:

Այն իր մեջ ներառում է հետևյալ ***հիմնական փուլեր.***

1. Կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. Բառարանների. հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3.Նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը

10

կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. Կողմնորոշիչ: Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. Հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. Ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անդրադարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

7. Ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- Ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

11

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել

ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Ժամանակակից դպրոցում աշակերտը ուսումնական գործընթացում հանդես է գալիս, որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է ուսուցչի և համադասարանցիների հետ: Սա հենց այն անձնային-կողմնորոշված ուսումնառության ոճն է, որը հանդիսանում է կրեատիվության զարգացման բարենպաստ գործոն: Հենց այսպիսի միջավայրում մանկավարժը պետք է, առաջին հերթին, ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ աշակերտների ստեղծագործականության լիարժեք զարգացման համար, քանի որ ստեղծագործականությունը թույլ է տալիս աշակերտին հանդես գալ, որպես ուսման գործընթացի ակտիվ մասնակիցը, իրականացնել սեփական մտահաղացումները:

կրտսեր դպրոցական տարիքում ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացումը առավել արդյունավետ է տեղի ունենում, քանի որ երեխաները այս տարիքում առավել հետաքրքված են շրջապատող իրականությամբ, պահանջ ունեն ինքնուրույն գործունեության, սակայն միևնույն ժամանակ, մեծի հեղինակությունը դեռևս նշանակալի է երեխայի համար, ինչն օգնում է մանկավարժին ուղղորդել աշակերտի գործունեությունը: Յուրաքանչյուր աշակերտ անհատականություն է, և ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործականության դրսևորման աստիճանը յուրաքանչյուրի մոտ կարող է տարբեր լինել:

Փորձը ցույց է տալիս, որ կարելի է առանձնացնել մի շարք խնդիրներ, որոնք փոխադարձաբար կապակցված են աշակերտների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործականության զարգացման հետ:

12

Այդ խնդիրներն են.

. Երեխայի ստեղծագործական ունակությունների և ինքնուրույնության զարգացում;

- Բանավոր խոսքի զարգացում;
- Ինքնարտահայտվելու կարողության զարգացում;
- Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ;
- Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում;
- Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում;
- Գեղագիտական ճաշակի զարգացում;
- Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն;
- Իրավիճակը շտկելու կարողություն;
- Բարդույթներից ազատագրում:
- Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացում աշակերտների ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են.
- Խնդիրների պլանավորում և բաշխում;
- Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն;
- Ստեղծագործելու ազատություն;
- Խրախուսում և գնահատում;
- Սխալի իրավունքի պահպանում;
- Հարգանք ընկերոջ կարծիքի նկատմամբ;
- Համագործակցություն:

Ենթադրում եմ, որ աշակերտների մոտ ձևավորելով որոշակի առումով «ազատ տարածք»՝ սեփական մտքերը և կարծիքները արտահայտելու, բաց քննարկումներին մասնակցելու, ինչպես նաև դրանք ինքնուրույն խթանելու և կազմակերպելու համար, աշակերտները կկարողանան բավականաչափ ինքնահաստատվել, ավելի վստահ և ինքնուրույն զգալ դասի ժամանակ և տնային հանձնարարություն կատարելիս: Շատ կարևոր գործոն է նաև

13

ուսուցչի՝ խրախուսելու և աշակերտին սխալվելու իրավունք վերապահելու մարտավարությունը: Իսկ այս գործոնները բերում են անձի մոտ ստեղծագործական մտքի խթանմանը, առավել ազատ և անկաշկանդ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը հիմնված է երևակայության, ինտելեկտի, գյուտարարության և ինքնակրթության վրա: Կարելի է առանձնացնել ինքնուրույնության 3 հիմնական բաղադրիչներ.

1) Իրազեկություն՝ գիտելիք, հմտություն, փորձ;

2) Ստեղծարար մտածողություն՝ ճկունություն, համառություն որոշում կայացնելիս, կրեատիվ մտածողության մեթոդների կիրառում;

3) Մոտիվացիա՝ ներքին՝ սեփական հետաքրքրքրվածությունը խնդրի լուծման ժամանակ, ինքնակատարելագործման ձգտում և գիտելիքների կիրառում, և արտաքին մոտիվացիա՝ նյութական խրախուսում և առաջխաղացում:

Ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը, ինչպես յուրաքանչյուր ընդունակություն, անընդհատ զարգացման կարիք ունեն: Կան մի շարք գործողություններ, որոնց իրականացման դեպքում բարձրանում է աշակերտների՝ ինքնուրույն աշխատելու ցանկությունը՝

- Հոգեբանական հատկանիշների վերլուծություն;
- Մտքերի վերարտադրության մեթոդների ուսուցանում;
- Խմբում աշխատելու կանոնների ուսուցում և դերերի բաշխում.

Աշակերտների ինքնուրույնության բարձրացման կարևոր միջոց է մոտիվացիայի բարձրացումը:

Այսպիսով, դպրոցում սովորող աշակերտների ինքնուրույնությունը և ստեղծագործական ունակությունները խթանում է մանկավարժական հաջող գործունեությունը, որն իրականացվում է համապատասխան մեթոդների, միջոցների օգնությամբ՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիական միջոցներ:

14

Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:

Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Դիտարկենք թե ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է կիրառել տարրական դասարաններում:

<u>Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները</u> կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից: Ինքնուրույն աշխատանքի տեսակները ներկայացնենք հետևյալ կերպ՝

<u>Առաջին</u>՝ ըստ ուսումնական նպատակների.

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
3. Գիտելիքները համակարգող

4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող

Երկրորդ ՝ըստ ճանաչողական գործունեության բնույթի

1. Ըստ տրված նմուշի օրինակ՝ գրել տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն:
2. Կառուցողական
3. Ստեղծագործական – հետազոտական

Երրորդ ՝ըստ կազմակերպման ձևի

1. Ընդհանուր ճակատային, երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը
2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա,
3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

Չորրորդ ՝ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարաններ և այլն:
2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն:
3. Դիտումներ և գործնական աշխատանքներ:
4. Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման
5. Գրաֆիկական աշխատանքներ
6. Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր ես և շրջակա առարկայի ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

Հինգերորդ ՝ըստ կատարման տեղի՝

1. Դասարանում,
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
3. Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել կատարելու համար:.

Այսպես՝

Ա . Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

Բ. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:

Գ. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

Դ. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում աշխատանքը: Ինքնուրույն,ստեղծագործական բնույթի աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

17

Ե. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, օրինակ՝բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում. Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

Զ. Ինքնուրույն, ստեղծագործական բնույթի աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

Է. Ինքնուրույն, ստեղծագործական բնույթի աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների
կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

Ը. Ցանկալի, որ ինքնուրույն և ստեղծագործական բնույթի աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

Թ. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման

«մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Ժ. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների

բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

Ի. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ:

Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով թեմատիկ մանկավարժական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա, կարող եմ եզրակացնել, որ կրտսեր դպրոցականների մոտ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացման համար կարևոր է, որպեսզի երեխաների համար ստեղծվեն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լուծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքում հանդիպած դժվարությունները:

Աշակերտների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ: Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության:

Պետք է արձանագրել.

1.Կիրառելով սովորողների ինքնուրույն գործունեությունը կազմակեպելու զանազան մեթոդներ և հնարներ՝ չպետք է մոռանալ , որ աշակերտին հարկավոր է նախապատրաստվել համապատասխան գործունության կատարմանը: Հակառակ դեպքում նրա աշխատանքում արդյունավետություն արձանագրել հնարավոր չէ:

2.Սովորողների ինքնուրույն գործունեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետելու համապիտանի ուսումնական կարողություններին և պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության: Ընդլայնում է նրանց մտահորիզոնը տարբեր առարկաների ուղղությամբ

3.Սովորողներին խթանում է ինքնազարգացումը, ինքնավերլուծությունը , ինքնաստուգումն ու ինքնագնահատումը: Այս ամենը կարելի է ամփոփել մեկ կոչով .«Նպաստել անձի զարգացմանը»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.

2. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, 2016թ.

3. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.

5. Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ. Ամիրջանյան Յ.Ա.
6. Савельева Т. М. Теоретические проблемы развивающегося образования. Минск, ПКООС, 2007
7. Шинтарь З. Л. Интеллектуальная самостоятельность младших школьников. М.: 2007
8. Эльконин Д. Б. Психическое развитие в детских возрастах: Избранные психологические труды. М.: МПСИ, 2001